ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«19» 12 2023 թ.
№ ՊՄԵՊ-44/-1767

«ԼԱՌՏ» ՍՊԸ-ի (00202983)
տնօրեն Լ. Գևորգյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Շիրվանզադե 9շ 9բն.
հեռ. 077 740-102

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԼԱՌՏ» ՍՊԸ-ի միջև 14.10.2022թ. կնքված N ՀՄԱԱՇՁԲ-22-10/30-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԼԱՌՏ» ՍՊԸ-ն մինչև 2022թ. դեկտեմբերի 20-ը պետք է կատարեր 454,545,457 ՀՀ դրամին չափով շինարարական աշխատանքներ, սակայն «ԼԱՌՏ» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում կատարվել է 364,756,344 ՀՀ դրամի չափով շինարարական աշխատանքներ, 89,789,113 ՀՀ դրամի չափով շինարարական աշխատանքներիը սահմանված ժամկետում չեն կատարվել:

Հիմք ընդունելով Պայմանագր 3.1.4. կետի «ա» ենթակետը (Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. դեկտեմբերի 18-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 89,789,113 ՀՀ դրամի չափով շինարարական աշխատանքների մասով:

Տեղեկացնում եմ, որ «ԼԱՌՏ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 10,640,010 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 2,272,727 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն, որը հաշվարկված է մինչև 24.11.2023թ. ներառյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

(կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 45,454,545.7 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 26,936,734 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2023թ. դեկտեմբերի 27-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 45,454,545.7 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 26,936,734 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԼԱՌՏ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023թ. օգոստոսի 27-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2068 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ